

Ա Տ Ե Փ Ա Խ Ա Ե Լ Ի Ն Ա Կ Ի

1904 թ. Հոկտեմբերի 22-ին երկարատև և ծանր հիւսնդութիւնից յետոյ մեռաւ սակաւաթիւ կովկասագէտներից մինը ևս Ստեփան Զելինսկին:

Նա մնուել էր 1843 թ. Օգոստոսի 1-ին Նախիշեանի Ետրըմջա գիւղում, Սաւրեցի հայ ծնողներից և կաքուելով լուսաւորչական եկեղեցում, Սամանն կոչուել է Սակայն Նրա հայրը օրդոգըս եկեղեցուն գիւղեղով, վերստին մկրտել էր առուել Նրան և անուանել Ստեփան։ Մօր, հոգատարութեամբ նա մուսել էր Նախիշեանի քաղաքային զարդում և ապա Երևանի զիմնազիայում, որ աւարտելուց յետ ուսուցիչ էր կարգուել, 1883 թ. Զելինսկին հրաւիրուեց երկրագործութեան մինիստրի լիազօր Տիխէնվիլից ուսումնականիրելու Անդրկովկասի պետական հողերի վրայ բնակուող գիւղացիների անտեսական գրութիւնը և յետոյ ստանձնեց պետական հողերի կարգադրողի պաշտօն, որ վարեց մինչև մահը։

Ստեփան Զելինսկին բաւական լաւ գիտէր հայերէն և աշխատակցում էր «Մշակին», «Արձագանքին» և «Ազգագրական Հանդիսին»։ Մի ժամանակ նաև վարեց նաև Թիֆլիսի Հայոց Հրատարակական ընկերութեան վարչութեան փոխ-նախագահի պաշտօն, իսկ վերջին տարիներու հրատարակեց հայերէն մի շարք գիւղատնտեսական հանրամատչելի զրոյլիներ։

Համեմատարար աւելի շատ և աւելի լուրջ են նրա ուռուերէն աշխատութիւնները, որոնց մէջ զլուխ գործոց է համարելու Զանգեզուրի գաւառի պետական հողերի վրայ բնակուող գիւղացիների տնտեսական գրութեան ուսումնամատրութիւնը։ Նոյնպիսի ուսումնամատրութիւններ ունի նաև Աղքասանդրապոլի, Բորչալուի և Լենկորանի գաւառների վերաբերութեամբ, միայն այս վերջին երկուոր մնացել են անտիպ։ Գնահատելի է նաև «Объяснительный словарь татарскихъ, грузинскихъ и армянскихъ словъ вошедшихъ въ Материалы для изученія экономического быта, государственныхъ крестьянъ Закавказскаго края»* խորագիրը կրող բառարանը։

Զելինսկին շնորհիւ իւր բազմաթիւ ճանապարհորդութիւնների արդէն շատ լաւ ճանայում էր Անդրկովկասը և եթէ ծանր ու երկարատև հիւսնդութիւնն ու անժամանակ մահը արգելք չը լինէին՝ նա աւելի մեծ ծառայութիւն կարող էր մատուցանել կովկասագիտութեան։